**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«28» հոկտեմբերի 2021 թ. N 66-Լ

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1920-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՌԱՆՁԻՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն ու ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգով առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասով գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու նպատակով լիազոր մարմին ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի կազմման ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:

10/28/2021

X

ԱՐՄԵՆ ՂՈՒԼԱՐՅԱՆ

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050 **Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ**

*ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

Հավելված

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի

նախագահի

2021 թ. հոկտեմբերի 28-ի

66-Լ հրամանի

# ՁԱՓՈՐՈՇԻՉ-ՈՒՂԵՑՈՒՅՑ

**ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասով գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու նպատակով լիազոր մարմին ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի կազմման**



## I.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն «ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասով գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու նպատակով լիազոր մարմին ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի կազմման» չափորոշիչ-ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) աշխատանքային ձեռնարկ է, որում զետեղված են հողամասերի մի նպատակային և գործառնական նշանակությունից մյուսին փոխադրելու նպատակով կազմվող անհրաժեշտ փաստաթղթերի լրակազմ ցանկը՝ ՀՀ օրենսդրությանը և գործող նորմերի պահանջներին համապատասխան:

**Սույն ուղեցույցում վկայակոչված են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը.**

1) ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի՝ «ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշում,
2) ՀՀ կառավարություն 2005 թվականի դեկտեմբերի 29-ի՝ «Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքները կառուցապատելու կանոնակարգման միջոցառումների մասին» N 2404-Ն որոշում
3) ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»,
4) ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի՝ «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1101-Ն որոշում,
5) ՀՀ կառավարություն 2015 թվականի մարտի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի

Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշում:

6) ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» N 792-Ն որոշում:

## II.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուղեցույցում տրվում են հողամասերի նպատակային նշանակության փոփոխության նպատակով մշակվող փաթեթի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները,
2. Ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն ընթեռնելի, սահմանված կարգով վավերացված չպարունակեն լրացուցիչ ավելորդ տեղեկատվություն,

## III. ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

3. Փաստաթղթային փաթեթը ներկայացվում է տեղական ինքնակառավարման (ՏԻՄ) մարմինների կողմից կամ տարածքային կառավարման մարմինների միջնորդությամբ՝ համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգի:
4. Փաստաթղթային փաթեթի լրակազմությունը վավերացվում է տեղական ինքնակառավարման (ՏԻՄ) մարմնի կամ տարածքային կառավարման մարմնի պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցչի կողմից:

**ԿԱՐԵՎՈՐ Է.**

**Ամբողջական փաթեթը ներկայացվում է էլեկտրոնային տարբերակով**




# ՑԱՆԿ

## Լիազոր մարմին ներկայացվող փաթեթում ներառվող անհրաժեշտ փաստաթղթերի /էլեկտրոնային/

/ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով/

| N | Անհրաժեշտ փաստաթղթեր | Առկայություն | Իրավական հիմնավորում | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Քաղաքացու կամ իրավաբանական անձի դիմումը համայնքի ղեկավարին և դիմումին կցվող փաստաթղթերի պատճենները ***/Հավելված 1/***: | Տրամադրվում է դիմողի կողմից: | ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշում | Համասեփականության, օգտագործման կամ կառուցապատման իրավունքի մի քանի սուբյեկտների դեպքում՝ վերջիններիս ստորագրությամբ |
| 2 | Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենը ***/Հավելված 2/***: | Տրամադրվում է դիմողի կողմից: | | |
| 3 | Հողամասի տեղադիրքը՝ նշված բնակավայրի հատկագծային կառուցվածքում՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբով՝ համաձայն ձևաչափի ***/Հավելված 3/:*** | Մշակվում է համայնքա-պետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից: | ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշում | |
| 4 | Հողամասի հատակագիծը (շրջադարձային կետերի կոորդինատներով) ***/Հավելված 4/***: | Մշակվում է համայնքա-պետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից: | ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշում | |
| 5 | Կառուցապատման սխեմա 1:500 կամ 1:1000 մասշտաբով, համաձայն ձևաչափի ***/Հավելված 5/,*** նշելով.<br>• հողամասի սահմանագիծը,<br>• հարևան հողօգտագործումները, | Մշակվում է դիմողի կամ համայնքա-պետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից: | ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշում<br>ՀՀ կառավարության 2011 թվականի | Կառուցապատման սխեմայի մշակման համար որպես հանույթային հիմք օգտագործվում են համապատասխան բնագավառի պետական լիազորված մարմնի կողմից տրամադրված և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | • գոյություն ունեցող և նախատեսվող շենքերն ու շինությունները, դրանց բնույթը, շենքերի, շինությունների միջև հեռավորությունները,<br>• շենքերի/շինությունների հեռավորությունները մայրուղիներից, ճանապարհներից, փոփոխության ենթակա հողամասի տրանսպորտային մոտեցումները (մուտքն ու ելքը)՝ անհրաժեշտության դեպքում՝ երկրորդական ճանապարհների նախատեսմամբ, | | դեկտեմբերի 29-ի N1920-Ն, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2404-Ն որոշումներ, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N263-Ն հրաման «ՀՀՇՆ 30-01-14» | վավերացված կադաստրային և/կամ հողաշինարարական քարտեզները:<br><br>Ինժեներական ենթակառուցվածքների վերաբերյալ տեղեկանքները տրվում են մատակարար կազմակերպությունների կողմից՝ համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման/կառուցապատողի հայտի հիման վրա: |
| | • ավտոկայանատեղիները, | | | |
| | • ինժեներական ենթակառուցվածքի գծային և կետային օբյեկտների տեղադիրքն ու համաձայնեցումները մատակարար կազմակերպությունների հետ, | | | Տեղեկանք մատակարար կազմակերպություններից տարածքի՝ ինժեներական ենթակառուցվածքներով ծանրաբեռնվածության մասին |
| | • փոփոխվող տարածքից 1000մ շառավղով սանիտարապաշտպանիչ գոտի պահանջող օբյեկտների առկայության/բացակայության վերաբերյալ տեղեկատվություն: 70 մետր հեռավորությամբ՝ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների առկայության վերաբերյալ: | | | Առկայության դեպքում նշել օբյեկտի բնույթն ու տեղադիրքը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | • հարևան հողօգտագործողների համաձայնությունը: | | | Ըստ անհրաժեշտության, օրինակ՝ կառուցապատման կամ քանդման պարագայում |
| 6 | Տեղեկանք Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին առնչություն ունենալու մասին: ***/Հավելված 6/*** | Տրվում է համայնքի ղեկավարի կողմից: | ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշում | Նաև հողամասին առնչվող այլ սահմանափակումների մասին |
| 7 | Համայնքի ղեկավարի տեղեկանք-հիմնավորումը՝ ***/Հավելված 7/***<br>• համայքնի համար օբյեկտի կարևորության վերաբերյալ,<br>• գլխավոր հատակագծում համարժեք տարածքի բացակայության վերաբերյալ, | Մշակվում է համայնքա-պետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից: | ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշում | |
| 8 | Հատուկ կարգավորման գոտիներում, համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող, համայնքի դիմագիծն արտահայտող միջավայրում կառուցապատման առաջարկություն ներկայացնելիս անհրաժեշտ է ներկայացնել էսքիզային նախագիծ: ***/Հավելված 8/*** | Մշակվում է նախագծողի կողմից: | ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշում | Կառուցվող օբյեկտի ճարտարապետա-հատակագծային և ծավալատարածական լուծումները՝ ճարտարապետական միջավայրին համահունչ /ճակատ, համայնապատկեր, գլխավոր հատակագիծ/: |

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար[1]՝

______________________________

/մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման կամ համայնքի ղեկավար/ /ստորագրություն, անուն, ազգանուն/

[1] **Փաստաթղթերի լրակազմության հավաստում**




## ԿԱՐԵՎՈՐ Է.

1
- Փաթեթները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով, անկախ առձեռն ներկայացվող նյութերից:

2
- Ինքնակամ կառուցված շենք-շինությունների առկայության դեպքում ներառել կառուցված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված եզրակացություն:

3
- Լրամշակման դեպքում ներկայացնել ամբողջական /լրակազմ/ փաթեթ, այլ ոչ թե միայն լրամշակվող հատվածը:

# ԿԱՐԵՎՈՐ Է.

Սույն ուղեցույցում վկայակոչված են կից ներկայացվող իրավական փաստաթղթերը.

## Կարգավորող իրավական ակտեր

- https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135745
- http://www.minurban.am/lows/files/Havelvac-30-01-2014.pdf
- https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131590
- https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=125503
- https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=65113
- https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=82045
- https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=82045
- https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=13388




## Հավելված 1

Քաղաքացու կամ իրավաբանական անձի համայնքի ղեկավարին ուղղված դիմումը՝ համաձայն 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի N 4 հավելվածի Ձև 2-ի

**Ձև N 2**

______________________________________(համայնքի անվանումը)
__________________________________(համայնքի ղեկավարի անունը, ազգանունը)
__________________________________(դիմողի անունը, ազգանունը (անվանումը)
________________________________________(բնակության վայրը (գտնվելու վայրը)

### Դ Ի Մ Ո Ւ Մ

### ՀՈՂԱՄԱՍԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ) ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ փոփոխել ___________________________________________________________
*հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը (հողամասի ծածկագիրը՝ ______________)*
1) հողամասի մակերեսը՝ ______________ , փոփոխվող հովամասի մակերեսը՝ ____________________
2) գլխավոր հատակագծով նախատեսված նպատակային և գործառնական նշանակությունները՝

____________________________________________________________________________

3) առաջարկվող նպատակային և գործառնական նշանակությունները՝

____________________________________________________________________________

4) հողամասի նշանակությունը փոփոխելու նպատակը (նախատեսվող օբյեկտի բնույթը, ծավալը, հզորությունը)՝

____________________________________________________________________________

6) բիզնեսի նպատակով նախատեսվող օբյեկտների մասին տեղեկատվություն (կատարվելիք ներդրումների չափի և ստեղծվելիք աշխատատեղերի վերաբերյալ)՝

____________________________________________________________________________

7) հողամասի սեփականության (օգտագործման (վարձակալության), իրավունքի վկայականի պատճենը՝
___________________________________________թերթ.
8) ինքնակամ շինություններ (առկայության դեպքում)՝ ________________________________________

Դիմող _____________________ ______________________________________________
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_______ ______________20______թ.

**Հավելված 2**

Անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականի պատճենը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
(ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԳՐԱՆՑՄԱՆ




**Հավելված 3**

Փոփոխման ներկայացվող հողամասի դիրքը համայնքի հատակագծային կառուցվածքում









**Հավելված 4**




# ԿԱՐԵՎՈՐ Է.

- հատակագիծը ներկայացվում է ստորագրությամբ և կնիքով
- Կից ներկայացվում է նաև չափագրողի լիցենզիան

**Հավելված 5**

Փոփոխման ներկայացվող հողամասի իրավիճակային /կառուցապատման/ սխեմա




* ներկայացվող սխեմայում անհրաժեշտ է նշել հարևանությամբ գտնվող շենք-շինությունների բնույթն ու հեռավորություններ նախատեսվող կառույցից:
** Նախատեսվող կառույցի մոտեցումները /մուտքն ու ելքը/, ավտոկայանատեղին /ըստ անհրաժեշտության/ ապահովելով ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները:
*** Նշված բոլոր չափերը տրված են պայմանական /ներկայացվող սխեմայում անհրաժեշտ է նշել հորիզոնական չափերն՝ ապահովելով ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները/:

A - Նախատեսվող կառույցի հեռավորությունները հողամասի սահմանից /մ/:
B - Նախատեսվող կառույցի հեռավորությունները հարակից շենք-շինություններից /մ/:
C - Փոփոխման ներկայացված հողամասի հեռավորություն ավտոճանապարհից /մ/:
K - Կառուցապատման գծի հեռավորությունն ավտոճանապարհի եզրից /մ/:
D - Կառուցապատման սխեմայում նշվող այլ հեռավորություններ, չափեր /մ/:
E - Նախատեսվող կառույցների հեռավորությունները միմյանցից /մ/:
F - Նախատեսվող օժանդակ կառույցի հեռավորությունները հողամասի սահմանից՝ ապահովելով շինարարական նորմերով սահմանված պահանջները /մ/:




ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

MINISTRY OF ENERGY INFRASTRUCTURES
AND NATURAL RESOURCES
OF THE RoA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS"CJSC
GENERAL DIRECTOR

0084 Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 010 72 00 10: Ֆաքս 010 72 01 21

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 010 72 00 10: Fax: 010 72 01 21

МИНИСТЕРСТВО ЭНЕРГЕТИЧЕСКИХ ИНФРАСТРУКТУР
И ПРИРОДНЫХ РЕСУРСОВ РА
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР
0084, Армения, Ереван, ул.Зор. Андраника 1
Тел: 010 72 00 10: Факс 010 72 01 21
E-mail: hven@hven.am, www.hven.am

VEOLIA
Ջուր

ГАЗПРОМ АРМЕНИЯ

Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

ЗАМЕСТИТЕЛЬ
ГЕНЕРАЛЬНОГО ДИРЕКТОРА

Тбилисское шоссе, 43, Ереван, Республика Армения, 0091
тел.: (3741 0) 294-728, 294-933, факс: (374 10) 294-728
e-mail: inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՏԵՂԱԿԱԼ

0091, ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43
հեռ.՝ (374 10) 294-728, 294-933, ֆաքս՝ (374 10) 294-728
էլ.փոստ՝ inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ

ՀՀ, ք. Երևան, 0047, Ա. Արմենակյան 127, հեռ.՝ +374 (11) 59 12 01, +374 (11) 59 12 00




**Հավելված 6**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

.......................................ՄԱՐԶ

..........................................ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Հայաստանի Հանրապետության
Մարզի........................ համայնք.................
Հասցե......................................................
Հեռ.........................................................
Էլ-փոստ..................................................

**ՏԵՂԵԿԱՆՔ**

Տրվում է առ այն, որ ՀՀ ................. մարզի ................. համայնքի վարչական սահմաններում գտնվող /համայնքային, իրավաբանական, ֆիզիկական անձի/ սեփականությունը հանդիսացող .................կադաստրային ծածկագրի ................. հա հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում:

Համայնքի ղեկավար՝ ......................................................

Կ.Տ. /ստորագրություն, անուն, ազգանուն/




**Հավելված 7**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

.......................................ՄԱՐԶ

.........................................ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Հայաստանի Հանրապետության
Մարզի........................ համայնք.................
Հասցե.....................................................
Հեռ.........................................................
Էլ-փոստ.................................................

Տեղեկանք-հիմնավորում

.................................... համայնքում քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակություն փոխելու մասին ............................................

Համայնքի ղեկավար՝ ......................................................

Կ.Տ. /ստորագրություն, անուն, ազգանուն/

Քարտուղար՝ ......................................................

/ստորագրություն, անուն, ազգանուն/

**Հավելված 8**

.................................. ՕԲՅԵԿՏԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԷՍՔԻԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Հեղինակ ..................................

Հասցե ..................................

Տարեթիվ

# ԿԱՐԵՎՈՐ Է.

Տարբեր օբեկտների հեռավորությունը ցանկպատից

